

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ՝
ԱՐԱԲԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՎԱԾ ԲԱՌԱՇԵՐՏԸ ¹

(ըստ Ապարանի շրջանի մի քանի գյուղերի խոսվածքների)

Մեր նախորդ հոդվածում ուսումնասիրել էինք Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի բարբառային մի շարք միավորներում առկա արաբերեն փոխառությունները՝ ըստ այդ շրջանի մեկ տասնյակ գյուղերի խոսվածքների²: Ստորև կանդրադառնանք Արագածոտնի մարզի Ապարանի շրջանի մի քանի խոսվածքներում կիրառվող արաբերեն փոխառություններին³: Քանի որ արաբերեն ծագում ունեցող, ուղղակի և միջնորդավորված փոխառությունները խնդրո առարկա տարածաշրջանի բարբառային միավորներում բավականին շատ են, առավել նպատակահարմար է դիտարկել այնպիսիք, որոնք ուշագրավ են հնչյունաբանական, բառակազմական իրենց առանձնահատկությունների առումով⁴:

Ապարանի համայնքի Ապարան-Արագածի տարածքում 1829-30թթ. վերաբնակեցվել են պաշկերտցի գաղթականներ, որոնք գործածում են Ալաշ-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6B302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Տե՛ս Ս.Միքայելյան, *Արաբերեն փոխառություններ Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի բարբառային միավորներում*, «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2019, էջ 141-149:

³ Ապարան խոշորացված համայնքն իր մեջ ներառում է Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ, Կայք, Հարթավան, Ձորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ, Քուչակ, Ծաղկաշեն բնակավայրերը: Համայնքի ներկայիս բնակչությունը 1828-30-ական թթ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ, Մուշ, Վան, Էրզրում, Խոյ և այլ բնակավայրերից վերաբնակեցվածների սերունդներն են: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (1914-1918թթ.) Ապարանում վերաբնակվեցին նաև ցեղասպանությունից փրկված հայերի շատ գերդաստաններ (տե՛ս <http://aragatsotn.mtad.am>):

⁴ Ուսումնասիրության նյութը քաղել ենք Արագածոտնի մարզում գիտական գործուղումների ընթացում արված ձայնագրություններից, այս տարածաշրջանի բարբառային միավորներին նվիրված ուսումնասիրություններից, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա բարբառային համապատասխան ձեռագիր նյութերից (տեսրեր 51, 60, 386, 387, 401, 432): Հարկ է նշել, որ արաբերեն ծագում ունեցող բառերի մի մասի դեպքում է միայն նշված փոխառու լեզուն, առանց համարժեք ձևի ներկայացման, իսկ հիմնական մասի ստուգաբանությունը և արաբերեն համարժեքը տալիս ենք մենք:

կերտի խոսվածքը⁵: Խոսվածքը պատկանում է Մշո բարբառի հյուսիսարևելյան խմբին⁶: Նրա հնչյունաբանական առանձնահատկություններից, որոնցով տարբերվում է բուն Մուշի բարբառից, բացի այդ կարևորություն է ներկայացնում նաև արաբերեն փոխառությունների առումով, հարկ է առանձնացնել այն, որ Ալաշկերտի խոսվածքը բառասկզբում *η* չունի. այն վերածվել է *խ*-ի (Ղազար>Խազար), մինչդեռ Մուշի խոսվածքը նման փոփոխություն չի կատարել: Բառասկզբում *η* (Ϝ)>*խ* հնչյունափոխություն առկա է նաև արաբերեն փոխառյալ բաղադրիչով կազմված բառերում: Օրինակ՝ **խարհքուտեն** «օտարություն» (արաբ.՝ *Ḥarīb*⁷ «պանդուխտ, օտար»)⁸: Իսկ խոսվածքում *խ* հնչյունի պահպանում բառի բոլոր դիրքերում առկա է և՛ հայերեն բարբառային (*խաղ-խաղ, տախտակ-տախտագ, մեխ-մըխ*) և՛ փոխառյալ կամ փոխառյալ բաղադրիչով կազմված բառերում. **խէր** է «լավ է, գործը բարի, հաջող է» (*хайр* «բարիք, բարօրություն»), **առդախըլխ** «արտը վարելը կամ հնձելը վերջացնելը» (*хлеб* «վերջ, ավարտ»), **քոխ** «1.մառան, 2.աղբատիկ խրճիթ» (*каух* «խրճիթ, հյուղակ»): Արաբերեն Ϝ-ից բացի մեկ այլ բաղաձայնի՝ *q*-ի (կաֆ) դեպքում ևս առկա է *q>խ* հնչյունափոխություն: Այս հնչյունը, չունենալով հայերեն համարժեքը, բարբառներում հնչյունափոխվում է *η*, *խ* կամ *կ* բաղաձայնների: Ապարանի շրջանի խոսվածքներում բառասկզբի և բառամիջի դիրքերում նկատելի է *q>խ* (մի շարք բառերում նաև՝ *q>q*) անցում. **խըսա** «գրույց» (*qibṣa* «առակ, գրույց, պատմություն»), **նըխշ** «նախշ» (*naqā* «զարդանախշ»), **խալմա-խալ** «աղմուկ, լեզվակռիվ» (*qal-maqṣl* «ասեկոսե, բամբասանք»): Բառավերջում, սակայն, *q*-ը հնչյունափոխվել է ձայնեղ *η*-ի՝ **արաղ** «օղի» (*#araq* «1.քրտինք, 2.օղի»), **թաբաղ** «պնակ» (*ṯabaq* «ափսե, պնակ») և այլն:

Ապարանի տարածաշրջանի մի շարք խոսվածքներում բառասկզբին բնորոշ շնչեղ ձայնեղ հպականները փոխառյալ բառերում չեն արտացոլվել: Արաբերենն էլ չունի շնչեղ ձայնեղների շարք, ինչպես նաև՝ ձայնեղ *q*, և փոխատու լեզվի *p* և *η* ձայնեղ հպականները ոչ միայն բառասկզբում, այլ նաև բառի բոլոր դիրքերում անփոփոխ են մնացել. **բազլա** «բակլա» (*baqla* «բակլա՝

⁵ Զ.Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, էջ 6:

⁶ Նույնը, էջ 5:

⁷ Փոխառյալ բառերի գրառման համար գործածվել է Baskerville MT for Brill 02 տառադարձման համակարգը, իսկ արաբերեն համարժեքները ներկայացվել են ըստ **Баранов Х., Большой арабского-русский словарь**, т. 1, 2, М., 2002 և *Al-Qšmās "al-jadīd*, Т., 1985 (արաբերեն) բառարանների:

⁸ Թեև որպես *η>խ* հնչյունափոխության օրինակներ փոխառյալ բառերի դեպքում նշվում են նաև *խըսմաստ, խսասք* և այլ բառեր (տե՛ս Զ.Մադաթյան, *նշվ. աշխ.*, էջ 35), սակայն հարկ է նշել, որ սկզբնաղբյուր փոխատու լեզվի (արաբերենի) հետ համեմատությամբ բառասկզբի դիրքում այստեղ ունենք ոչ թե Ϝ>x, այլ՝ *q>x* հնչյունափոխություն. հմմ.՝ *qabṣṣb, qisma*: Կարծում ենք՝ սա փոխառյալ տվյալ բառաշերտի միջնորդավորված լինելու մասին է վկայում:

ընդեղենի տեսակ»), **բալասան** «սպեղանի» (balasՏո «արաբական թփատեսակ, նրա ծաղիկը և յուղը»), **խարիբնալ** «օտարանալ» (Շarfb «պանդուխտ, օտար»), **քասիբ** «աղբատ» (kՏsib «շահող, վաստակող»), **դավի** «կոիվ, աղմուկ» (da#ՄՏ «վեճ, կոիվ»), **սընդուգ** «սնդուկ» (sundâq «արկղ, սնդուկ»), **մըգրադ** «մկրատ» (miqrâd) և այլն: Վերջին երկու օրինակում առկա է վերոնշյալ՝ q>q հնչյունափոխություն՝ արաբերեն q խուլ հպականի ձայնեղացում: Ապարանի մի շարք խոսվածքներին բնորոշ, բառամիջի և բառավերջի դիրքերում խուլ հպական բաղաձայնների ձայնեղացումը⁹, ինչպես նկատելի է, տարածվել է նաև փոխառյալ, սովյալ դեպքում՝ արաբերեն ծագում ունեցող մի շարք բառերի վրա: Իսկ թե ինչու մի դեպքում ունենք q>ju, օրինակ՝ **նըխշ** «նախշ» (naqâ «զարդանախշ»), իսկ մյուս դեպքում՝ q>q՝ **մըգրադ** «մկրատ» (miqrâd) հնչյունափոխություններ, կարծում ենք, պետք է առանձին դիտարկել. հավանական է՝ դրանք տարբեր ժամանակներում կատարված կամ ուղղակի ու միջնորդավորված փոխառություններ լինելու հանգամանքներով են պայմանավորված, ուստի արաբերեն նույն բաղաձայնի դեպքում բառի միևնույն դիրքերում գործել են հնչյունական տարբեր օրենքներ:

Ինչ վերաբերում է Ապարանի շրջանի խոսվածքներում կիրառվող *փ, պ, գ, կ* հպականներին, կիսաշփական բաղաձայնների *ձ, ծ, ց* լծորդական շարքին, *ճ, չ* կիսաշփականներին, ապա գրական արաբերենը չունի այս բաղաձայնները, ուստի դրանք փոխառյալ բառերում չեն հանդիպում: Փոխատու լեզվում գործառում է մեկ կիսաշփական ձայնեղ բաղաձայն՝ j-ն, որը կիրառական յուրահատկություն չի ցուցաբերում. այն համապատասխանում է ջ-ին. **ջընըզել** «1.սպանել, 2.երկատել, մեջտեղից կիսել» (jânaՏza «հուղարկավորություն»), **աջբաստես** «1.դժբախտ, 2.ձախորդ, 3.չափազանց տգեղ» (#ajfb «1.զարմանալի, 2.տարօրինակ») և այլն: Շփական բաղաձայնների ենթահամակարգում ուշագրավ է արաբերենի Ը-ի հնչյունափոխությունը ըստ Ապարանի շրջանի խոսվածքների հնչյունական օրենքների, որին արդեն անդրադարձել ենք և f հնչյունի պահպանումը փոխառյալ, այս դեպքում՝ նաև արաբերեն բառերում. **ֆուլան** «այսինչ, ոմն ոք» (fulՏո «այսինչ անձը») և այլն: Չայնորդների շարքից առանձնահատուկ է p-ի՝ p ձայնավորային հենարանով գործածումը մի քանի փոխառյալ բառերում՝ **ըռեհան** (riÊՏո): Մյուս դեպքերում արաբերեն ձայնորդները համապատասխանում են խոսվածքների համապատասխան հնչյուններին:

⁹ Տե՛ս **Ք.Մադաթյան**, *նշվ. աշխ.*, էջ 31:

Արագածոտնի մարզի Ապարանի շրջանի դիտարկվող բարբառային միավորներին խորթ է կրկնակ բաղաձայնների գործածությունը¹⁰: Արաբերենին խիստ բնորոշ կրկնակ բաղաձայններին այս խոսվածքներում համապատասխանում է մեկը՝ **խըսա** «գրույց» (qisba «առակ, գրույց, պատմություն»), **թըմել** «1.լրացնել, 2.մեռնել» (tšm «ամբողջական, ավարտուն») և այլն:

Ինչ վերաբերում է ձայնավորական համակարգին, ապա գրական արաբերենում առկա են երեք՝ *a, i, u* կարճ ձայնավորներ և նրանց երկար համարժեքները: Երկար ձայնավորները Ապարանի շրջանի խոսվածքներում, ինչպես հայերեն մյուս բարբառային միավորներում և գրական հայերենում որևէ կերպ չեն տարբերակվում՝ **մալ** «տավար» (mšl «1.ունեցվածք, 2.ապրանք»): Նկատելի է, որ արաբերենի ձայնավորական համակարգը, ի տարբերություն բաղաձայնականի, առավել շատ է հնչյունափոխվել, համապատասխանել խոսվածքների հնչարտաբերական առանձնահատկություններին: Առանձնացնենք հետևյալ օրինաչափությունները: Արաբերենի *a* ձայնավորը սակավ դեպքերում անփոփոխ պահպանվում և համապատասխանում է խոսվածքների համապատասխան ձայնավորին՝ **վախտ** «ժամանակ» (*waqt*), **վազիր** (*wazir*), **խարար** «լուր, տեղեկություն» (*xabar*) և այլն: Մի քանի բառերում՝ **նըխշ** «նախշ», **թըմել** «1.լրացնել, 2.մեռնել», իսկ հատկապես՝ փոխառյալ բաղադրիչով կազմված բազմավանկ բառերում, որտեղ մեկից ավելի *a* կա, մեկն առնվազը վերածվում է *ը*-ի՝ **խարըրբեր** «լրաբեր» - *xabar* «լուր, տեղեկություն», **ախմըխնալ** «հիմարանալ», **հալըլել** «մաքրել, արժանի անել», **ջընըզել** «1.սպանել, 2.երկատել, մեջտեղից կիսել»: Մակայն եթե բազմավանկ փոխառյալ բառը բառակազմության չի ենթարկվել, *a*-ն պահպանվում է՝ **խալմախալ** «աղմուկ, լեզվակոխիվ», **մասալա** «առակ» և այլն:

Ապարանի շրջանի մի շարք խոսվածքներում *h* և *ni* ձայնավորները քիչ են փոփոխությունների ենթարկվել. ինչպես նշվում է՝ դրանք առանձին դեպքեր են¹¹: Օրինաչափ է, որ փոխառյալ բառերում ևս այդ ձայնավորները հաճախ չեն հնչյունափոխվել. **քասիր** «աղքատ» (*kšsib* «շահող, վաստակող»), **վազիր** «վեզիր» (*wazir*), **հէկիս** «ժողովրդական բժիշկ» (*Èakšm*), **յանի թե** «իբր թե» (*ya#nē*), **խումաշ** «կերպաս» (*qumšà*) և այլն: Մի քանի բառերում, սակայն, առկա է *u>o* անցում. **բոխ** «1.մառան, 2.աղքատիկ խրճիթ» (*kâx*), **մոլա** «մահմեդական կրոնավոր՝ մուլա» (*mulla*) և այլն:

Ինչ վերաբերում է բառակազմությանը, ապա Ապարանի շրջանի բարբառային միավորներում բառակազմական կարևոր միջոց է ածանցումը. խոս-

¹⁰ Տե՛ս **Ք.Մաղաթյան**, *նշվ. աշխ.*, էջ 46:

¹¹ Նույնը, էջ 11-13:

վածքները հարուստ են վերջածքնոցներով, որոնց գերակշիռ մասը հայերենին բնորոշ ածանցներ են¹²: Փոխառյալ ածանցների մեջ արաբերեն ծագում ունեցողներ չկան: Այս խոսվածքներում կիրառվող, փոխառյալ հիմնական ձևային + հայերենի (բարբառային) բառակազմական ձևային կաղապարով կազմվել են ածանցավոր մի շարք բառեր: Օրինակ՝ *ան-ֆայմ* «անհասկացող» (fahm «հասկացողություն, միտք»), *ջրհել- ուտէն* «երիտասարդություն» (jshil «տգետ, անուս»), *խարիբ-ուտէն* «օտարություն» (Çarfb «պանդուխտ, օտար»), *հեռու-ող* «բարկացկոտ, ջղային», *նըխշ-ուն* «1.նախշավոր, 2.գեղեցիկ» (naqa «զարդանախշ») և այլն: Դրանց թիվը, սակայն, շատ չէ:

Արագածոտնի մարզի վերոնշյալ խոսվածքներում հանդիպում են նաև բառաբարդման օրինաչափություններով, անհողակապ կամ հողակապով կազմված բարբառային այնպիսի բառեր, որոնց բաղադրիչներից մեկը փոխառյալ է, իսկ մյուսը՝ ոչ: Օրինակ՝ *խաբբր- բեր* «լուր բերող՝ լրաբեր» (xabar «լուր, տեղեկություն»), *քըն-հարամ* «քունը խանգարված» (Ēaršm «1.արգելված, 2.սուրբ, 3.ապօրինի»), *ազրզ-մեռ* «սիրելին մեռած» (#azfz «փառավոր, սուրբ, մաքուր»), *առդ-ա-խըլիս* «արտը վարելը կամ հնձելը վերջացնելը» (xalab «վերջ, ավարտ»), *աջբ-ա-տէս* «1.դրժբախտ, 2.ձախորդ, 3.չափազանց տգեղ» (#ajfb «1.զարմանալի, 2.տարօրինակ»): Հարկ է նշել, սակայն, որ այսօրինակ կազմությունները սակավաթիվ են. սա պայմանավորված է բարբառային խոսքի առանձնահատկություններով:

Արագածոտնի շրջանի ուսումնասիրվող խոսվածքներում բազմաթիվ են նույնանիշ բառերը, որոնց մի մասն առաջացել է բարբառային և փոխառյալ բառերի զուգահեռ կիրառության հետևանքով: Օրինակ՝ *պաղրաստ-հազրր, լըրիվ-թամամ, ժամացույց-սրհատ, գերի-հէսիր, վերճանալ-խըլրսել* և այլն:

Արագածոտնի մարզի խնդրո առարկա խոսվածքներում կիրառություն ունեն նաև արաբերեն փոխառյալ բաղադրիչով կազմված պարզ և ածանցավոր բայերը, որոնցից են՝ *հազր-ել* «պատրաստել, նախապատրաստել» (hādir «1.ընթացիկ, 2.պատրաստ»), *խըռբ-ել* «փչացնել» (xaršb «ավերված, փչացած»), *հայըլ-ել* «մաքրել, արժանի անել» (Ēalal «թույլատրված, օրինական»), *հարմ-ել* «կեղտոտել, բաժին չլինել» (Ēaršm «1.արգելված, 2.սուրբ, 3.ապօրինի»), *ֆայմ-ել* «կռահել, հասկանալ» (fahm «հասկացողություն, միտք»), *ժըղ-ել* «զբաղվել (գրույցով, խողով և այլն)» (šugl «զբաղմունք»), *խըմը-ել* «ընդարմանալ, հանգստանալ» (xumšr «հարբեցությանը հաջորդող թմրությունը, 2.զարթ-խում»), *ջընըզ-ել* «1.սպանել, 2.երկատել, մեջտեղից կիսել» (janašza «հուղարկավորություն»), *թըմ-ել* «1.լրացնել, 2.մեռնել» (tšmm «ամբողջական, ավար-

¹²Տե՛ս Զ.Մադաթյան, *նշվ. աշխ.*, էջ 47-49:

տուն»), *թամբւ-ել* «լրացնել, ամբողջացնել», *ախմըխ-ն-ալ* «հիմարանալ» ("aĔmaq «հիմար, ապուշ»), *ջը(հ)էլ-ն-ալ* «երիտասարդանալ» (jŞhil «տգետ, անուս»), *խարիբ-ն-ալ* «օտարանալ» (ĈarfĔb «պանդուխտ, օտար»), *խայիմ-ն-ալ* «ամբանալ» (qŞ"im «1.կանգուն, 2.ամուր»), *հէռս-օդ-ել* «բարկանալ, ջղայնանալ» (ĔarŞs), *նըշխ-ել* «գարդանկարել» (naqā «գարդանախշ») և այլն:

Պարզ և ածանցավոր բայերից բացի, խոսվածքներում գործածվում են սակավաթիվ բայական հարադրություններ: Որպես հարադիրներ՝ հիմնականում հանդես են գալիս արաբերենից փոխառյալ գոյականներ՝ *խարաբ էնել* (*էնել < անել*) «փչացնել» (xarŞb), *խարաբ էղնել* (*էղնել < լինել*) «փմանալ, լսել» (xabar «լուր, տեղեկություն»), *հարամ էղնել* «չարժանանալ, չվայելել» (ĔarŞm «1.արգելված, 2.սուրբ, 3.ապօրինի»), *հալալ էղնել* «արժանի լինել, վայելել» (Ĕalal «թույլատրված, օրինական»), *հազըր կայնել* «պատրաստ կանգնել» (hāċir «1.ընթացիկ, 2.պատրաստ»), *խաստրին կըբնիլ* «նեղացնել» (xŞāir «1.ակնածանք, 2.որպիսության կենաց») և այլն:

Արաբերեն փոխառություններն իմաստաթեմատիկ առումով առավելապես բուսանուններ են, առտնին գործածության իրեր, գործիքներ, առօրյա հաղորդակցության հետ առնչվող բառեր: Թեև նշվում է, որ այդ բառերը փոխառվել են արաբական տիրապետության ժամանակ¹³, սակայն դրանց մի մասն էլ Ապարանի շրջանի խոսվածքներին անցել է ավելի ուշ շրջանում, միջնորդավորված (թուրքերենի և պարսկերենի միջոցով) եղանակով: Բառերի մի մասը (*նարինջ, մկրատ, լօբի*) ժամանակի ընթացքում սկսել է չդիտվել որպես օտար, սակայն հիմնականում դրանց՝ այլ լեզվի պատկանելը, հատկապես հայերեն բարբառային ձևի համարժեքի առկայության պարագայում այնուամենայնիվ գիտակցվում է: Արաբերենից փոխառված բառաշերտը հիմնական հատկանիշներով ենթարկվում է Ապարանի շրջանի խոսվածքների հնչյունական և բառակազմական օրինաչափություններին: Դիտվող շեղումները պայմանավորված են տարբեր ժամանակներում փոխառված, միջնորդավորված լինելու, միջնորդ լեզվի ազդեցությունները ևս կրելու հանգամանքներով:

¹³Տե՛ս Զ.Մադաթյան, *նշվ. աշխ.*, էջ 60:

Sona Mikaelyan. The Layer of Arabic Loanwords in the Dialectal Units of Aragatsotn Region .The article examines the vocabulary of Arabic loanwords in the dialectal units of Aragatsotn Region according to the speeches of a number of villages in the district of Aparan. The study shows that this word layer is mainly subject to the phonetic and word-formation patterns of the Aparan speech. The observed exceptions are due to the various circumstances of borrowing process — different periods of time, through and influenced by a source language.